ԼՂԻՄ-Ի ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին օրերին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը ընդհանուր առմամբ չի փոխվել: Մարդիկ արձյալ չեն գնում իրենց աշխատատեղերը:

Հունիսի 4-ի երեկոյան մարզի կենտրոնի Հաղթանակի հրապարակում տեղի ունեցավ քաղաքի աշխատավորների հերթական միտինգ: Մարդիկ միտինգի էին եկել տրանսպարանտներով, որոնց վրա գրված էր. «Ղարաբաղցիները ազատություն են պահանջում», «Միացում, միայն միացում»: Նրանք բերել էին նաև ուրիշ զրանգներ, հայկական ազգային խորհրդանշանը հանդիսացող եռագույն դրոշներ:

Միտինգը բացեց երկրամասում հայտնի մանկագիր Գուրգեն Գաբրիելյանը: Ելույթ ունեցան Ստեփանակերտի Մ. Հորկու անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դիրեկտոր Աշոտ Ստեփանյանը, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի կուսակազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանը, աշխատանքի վետերան Իշխան Ալեքսանյանը, կուսակցության քաղաքային կոմիտեի քարտուղար Հասմիկ Միքայելյանը և ուրիշներ: Նրանք նշեցին, որ ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների համագումարում մի շարք ելույթներ տոգորված են լճացման ժամանակների գաղափարներով, ինչը լուրջ մտահոգություն է պատճառում վերակառուցման կողմնակիցներին: Նրանք այն միտքը հայտնեցին, որ Ղարաբաղի պրոբլեմը կարող է լուծվել միայն ազգամիջյան հարաբերությունների հարցերում նոր մտածողության հաղթանակի, հասարակական կյանքի հետագա դեմոկրատացման շնորհիվ: Միտինգի մասնակիցները հույս հայտնեցին, որ համագումարում հակաստալինակառուցողական ուժերի դեմ հուսալի պատնեշ կընկանգնեցվի: Նրանք միևնույն ժամանակ բնակչությանը կոչ արեցին առաջվա պես պահպանել հանգստություն և տոկունություն, չենթարկվել հնարավոր պրովոկացիաներին:

Հունիսի 5-ին Ստեփանակերտում և մարզում իրավիճակը մնում էր նախկինը: Ծատերի կարծիքով, ՏԱՍՍ-ի վերջին հաղորդագրության մեջ այդ իրավիճակը չափից ավելի է դրամատիկացված: Երկրամասի բնակիչները սրտի ցավով ընդունեցին Բաշկիրիայի տարածքում տեղի ունեցած սոսկալի ողբերգության լուրը: Նրանք պատրաստակամություն հայտնեցին ուժերի ներածի չափ օգնություն ցույց տալ տուժածների ընտանիքներին:

Ինքնավար մարզում համեմատաբար անդորր է տիրում: Մարդիկ աշխատանքի են սպասում համագումարում իրենց դեպուտատի ելույթին:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ